ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 25.12.2018 թվականի թիվ 35 և 36 որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » դեկտեմբերի 2018 թվականի N 35

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-095-0089-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 18.12.2018 թվականի 2837, 2838 վկայագրերը և հողի սեփականաշնորհման հանձնաժողովի որոշումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն և Նարեկ Թովմասյանները հանդիսանում են Սարգիս Թովմասյանի ժառանգները և ըստ օրենքի ժառանգության վկայագրերի համաձայն ժառանգել են Ջրաշեն համայնքի 04.12.2001 թվականի N 10 որոշման իրավունքների ու պարտականությունների 1/14-ական մասերը

Որոշում եմ

1.Օրենքի ուժով 06-095-0089-0007 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.04259 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչել Արմեն Սարգսի Թովմասյանի 3/14-ական, Զարզանդ Սարգիսի Թովմասյանի 1/7-ական, Արեն Սարգսի Թովմասյանի 1/7-ական, Աստվածուհի Սարգիսի Թովմասյանի 1/7-ական, Ֆլորա Բաղդասարի Զարգարյանի 1/7-ական, Ռոման Սարգսի Թովմասյանի 1/7-ական և Նարեկ Սարգսի Թովմասյանի 1/7-ական բաժնեմասերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և (կամ) չի առաջացնում սերվիտուտ:

3.Հողամասի վրա առկա է 1992 թվականին կառուցված ինքնակամ կառույց:

4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե` Ջրաշեն համայնք 8 Փող. 12 Նրբ. 27:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 25 » դեկտեմբերի 2018 թվականի N 36

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԱՀԻՏ ԹԱՐՋՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անահիտ Թարզյանի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Ջրաշեն համայնքի 1Փ. 14 Նրբ. 24 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Անահիտ Թարզյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ